ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Բաց կառավարման գործընկերություն-Հայաստանի Հանրապետության երկրորդ գործողությունների ծրագրի նախագծի պարտավորությունների կատարման
(2014-2016թթ.)

	Աշխատանքի անվանում	Նպատակ/ակնկալվող արդյունք	Պատասխանատու մարմին/գործընկեր կազմակերպություն	Ժամկետ
1. ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ				
1.1	Գույքի և եկամուտների հայտարարագրման թափանցիկության ապահովում	Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների ու փոխկապակցված անձանց թղթային տարբերակով ներկայացվող հայտարարագրերից անցում հայտարարագրերի ներկայացման էլեկտրոնային համակարգի, ինչպես նաև նշված հայտարարագրերի ավտոմատ կերպով հրապարակայնացում հանձնաժողովի ինտերնետային կայքի միջոցով:	Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով	2015թ. հուլիս
1.2	«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում առկա երկրաբանական տեղեկության	Նպատակն է տվյալները դարձնել լայնորեն հասանելի հարցման հիման վրա՝ Ֆոնդի կայքի միջոցով, ինչպես նաև պահպանել տեղեկատվությունը, քանի որ	Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	2015թ. դեկտեմբեր

	թվայնացում և էլեկ-տրոնային շտեմարանի ներ-դրում	արխիվներում առկա տվյալները թղթային են, և դրանց մի մասը վնասվել է վատ պահպանության արդյունքում և ժամանակի ընթաց-քում էլ ավելի կվնասվի:		
1.3	Մշակութային ծառա-յությունների ոլոր-տում տեղեկատվու-թյան և ծառայու-թյունների մատչելի-ության ապահովում. մշակութային ար-ժեքների տեղեկատ-վական շտեմարանի ստեղծում	Ապահովել մշակութային արժեքնե-րի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, համակարգումը և հանրության լայն շերտերին միասնական ձևաչափով դրանց ներկայացումն ու հասանելիու-թյունը, շարժական ժառանգության հետազոտման, գիտական ուսում-նասիրման ու հանրահռչակման արդյունավետության բարձրացումը	Մշակույթի նախարարություն	2016թ. դեկտեմբեր
1.4	ՀՀ պաշտոնապես միացում ՆԱՏՕ-ի հովանու ներքո իրա-կանացվող «Բարե-վարքության ամրա-պնդում» նախաձեռ-նությանը	Պաշտպանության ոլորտում կո-ռուպցիայի նվազեցում և բաց կառավարման էթիկայի բարելա-վում	Պաշտպանության նախարարություն	2014թ. հուլիս
2. **ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ**				
2.1	Հանրային ծառայող-ների գիտելիքների և հմտությունների	տեղեկատվության ազատության վերաբերյալ կկազմակերպվեն դասընթացներ 200 քաղաքացիա-	**<u>Պատասխանատու մարմիններ՝</u>** Տարածքային կառավարման նախա-	2014-2016թթ.: Երկօրյա ուսու-ցումները

	բարելավում տեղեկատվության ազատության ոլորտում	կան և համայնքային ծառայողների համար: Դասընթացները կօգնեն հանրային ծառայողներին բաց և հաշվետու աշխատել հանրության հետ, ինչպես նաև պատշաճ կերպով մշակել և արձագանքել տեղեկատվություն ստանալու հարցումներին:	րարություն, Քաղաքացիական ծառայության խորհուրդ **<u>Գործընկեր կազմակերպություն՝</u>** «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ **<u>Ֆինանսավորող կազմակերպություն՝</u>** ԱՄՆ ՄԶԳ	կանցկացվեն 10 անգամ՝ 20 հոգանոց խմբերով:
2.2	Տեղեկություն ստանալու էլեկտրոնային հարցումներին ընթացք տալու մասին կարգի մշակում	«Պետական կառավարման համակարգում դիմողներից ստացած տեղեկություն ստանալու էլեկտրոնային հարցումներին ընթացք տալու վերաբերյալ» որոշման ընդունում: Կհստակեցվեն էլեկտրոնային փոստով ստացվող տեղեկություն ստանալու հարցումները գրանցելու, դրանց ընթացք տալու ժամկետներն ու կարգը:	**<u>Պատասխանատու մարմին՝</u>** Կառավարության աշխատակազմ **<u>Գործընկեր կազմակերպություն՝</u>** «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ	2014-2015թթ.
2.3	Տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրության ապահովում	Յուրաքանչյուր տարեսկզբին նախորդ տարվա տեղեկություն ստանալու հարցումների ամփոփ վիճակագրության հրապարակում պետական կառավարման մարմինների կողմից	Կառավարություն	2015-2016թթ.

2.4	Պաշտոնական տեղեկատվության պրոակտիվ հրապարակման ապահովում	Հայաստանի Հանրապետության թվով 200 համայնքներում կգործարկվեն համացանցային կայքերը: Նպատակն է բարձրացնել տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնությունը, թափանցիկությունը և հաշվետվողականությունը:	Տարածքային կառավարման նախարարություն	2014թ. դեկտեմբեր
3. **ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԲԱՑ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ**				
3.1	Էլեկտրոնային նոտարի ամբողջական համակարգի ներդրում	Էլեկտրոնային նոտարի ամբողջական համակարգի ներդրմամբ նոտարին հնարավորություն կտրվի նոտարական գործողությունների կատարման համար մի շարք փաստաթղթեր կամ տեղեկատվություն ստանալ անձամբ, էլեկտրոնային փաստաթղթերի միջոցով առցանց եղանակով՝ զերծ պահելով դիմողին լրացուցիչ փաստաթղթեր այլ մարմիններից ստանալու պարտականությունից:	Արդարադատության նախարարություն	2014թ. դեկտեմբեր
3.2	Քաղաքացիական կացության ակտերի գրանցման էլեկտրոնային համակարգի	Համակարգի ներդրման արդյունքում քաղաքացիական կացության ակտերի գրանցումները կթվայնացվեն:	Արդարադատության նախարարություն	2014թ. սեպտեմբեր

	ներդրում			
3.3	Մաքսային ձևակերպման ոլորտում՝ նախնական հայտարարագրման և ամբողջովին էլեկտրոնային հայտարարագրման համակարգերի ներդրում	Մաքսային սահմանը հատելուց առաջ ապրանքների և տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը կներկայացվի մաքսային մարմիններին, ինչի հիման վրա էլ մաքսային սահմանին անց է կացվելու ռիսկերի գնահատում: Ամբողջությամբ էլեկտրոնայնացված համակարգ ձևավորելու նպատակով ակնկալվում է մինչև 2014թ. վերջն ավտոմատացնել հայտարարագրի ներկայացման ընթացակարգը՝ ստեղծելով նախադրյալներ առանց հայտարարագրի թղթային տարբերակի ներկայացման ապրանքների բացթողում իրականացնելու համար:	ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե	2014թ. դեկտեմբեր
3.4	Քաղաքաշինական թույլտվությունների տրամադրման էլեկտրոնային համակարգի ներդրում և համայնքների կողմից դրանց փուլային գործարկում	Համակարգի ներդրման միջոցով կապահովվի կառուցապատման գործընթացի իրականացման ընթացքում օրենսդրությամբ սահմանված քաղաքաշինական թույլատվական փաստաթղթերի ձեռքբերման մատչելիությունը՝ արդիական տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման միջոցով:	Քաղաքաշինության նախարարություն	37 խոշոր քաղաքային համայնքներում՝ 2013-2014թթ., այլ քաղաքային համայնքներում՝ 2014-2016թթ.

		Համակարգի ներդրման արդյունքում զգալիորեն կբարձրանա կառուցապատման գործառույթներից օգտվողների սպասարկման որակը, գործընթացի թափանցիկությունը, ինչպես նաև կնվազեցվեն կոռուպցիոն ռիսկերը, կապահովվի թույլատվական ընթացակարգերի վերահսկելիությունը ողջ գործընթացի իրականացման ընթացքում:		
3.5	ՀՀ թվով 250 համայնքներում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթերի շրջանառության համակարգի ներդրում	Նպատակն է հանրային կառավարման ոլորտում փաստաթղթաշարժի միասնական համակարգի ձևավորումը, կառավարման ոլորտում օպերատիվության և որակի բարձրացումը: Արդյունքում ակընկալվում է ապահովել էլեկտրոնային փաստաթղթերի փոխանակում տեղական ինքնակառավարման մարմինների և պետական կամ տարածքային կառավարման մարմինների միջև:	Տարածքային կառավարման նախարարություն	2014թ. հուլիս
4. **ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԵՎ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԿԱՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ**				
4.1	Ինտեգրված սոցիա-	Համակարգը հնարավորություն է	Աշխատանքի և սոցիալական հարցերի	2016թ.

	լական ծառայությունների տրամադրման համակարգի ներդրում	տալիս ՀՀ քաղաքացիներին աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտին վերաբերող որևէ հարցով դիմել միասնական ընդունարան և ստանալ հնարավոր խնդիրների լուծումը՝ բացառելով դրամական վճարների (կենսաթոշակներ, նպաստներ կամ դրամական օգնություն) համար դիմելիս քաղաքացի-սոցիալական աշխատող անմիջական կապը, դրանով նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը:	նախարարություն	դեկտեմբեր
4.2	Քաղաքացիական հասարակության ցանցի ստեղծում	Համագործակցելով հասարակական կազմակերպությունների հետ՝ կստեղծվի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ցանց: Ցանցը կաջակցի Գործողությունների ծրագրի իրականացմանը, ինչպես նաև կիրականացնի ՀՀ կառավարության հանձնառությունների իրականացման մոնիտորինգ:	**<u>Պատասխանատու մարմին՝</u>** ԲԿԳ հայաստանյան համակարգող **<u>Գործընկեր կազմակերպություն՝</u>** «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ	ՔՀ ցանցի անդամների հանդիպումները կանցկացվեն եռամսյակը մեկ: